

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱԼ

Հայտնի է, որ հայ ժողովրդի կազմավորման գործընթացը սկզբնավորվել է դեռևս Ուրարտական պետության ժամանակ՝ Ք. ա. IX-VI դարերում: Սակայն վաղուց կազմավորված հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը սկզբնավորվեց V դարում՝ ազգային գրի ու գրականության ստեղծումից հետո, համազգային բարձր մշակույթի ձեռքբերման շնորհիվ և վտանգված ժողովրդի գոյապահպանությունն ապահովող ծրագրի մշակման անհրաժեշտությամբ:

Ազգային գաղափարախոսությունը ազգի քաղաքական գործունեության հոգևոր և մտավոր հիմքն է. նրա նպատակն է առաջադրել վեհ գաղափարներ, դրանք արմատավորել ժողովրդի յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ և կազմակերպել դրանց իրականացման արդյունավետ գործընթացը: Այն հանդես է գալիս և՛ որպես ուսմունք, և՛ որպես զգացմունք, և՛ որպես քաղաքականություն, նաև աշխարհայացք, որոնց շրջանակներում տրվում է ազգային արժեքների բացարձակ գիտակցությունը այլ արժեքների շարքում: Ինչպես ցանկացած պատմական երևույթ, ազգային գաղափարախոսությունը ևս ունի իր խորը արմատները: Նրա կայացմանը նախորդել են պատմական և մշակութաբանական բնույթի ստեղծագործություններ, բանահյուսական հավաքածուներ, գրական ստեղծագործություններ, որոնք ակնհայտորեն նպատականշված էին ժողովրդի մեջ հայրենասիրական զգացումներ ու ազգային արժանապատվություն արմատավորելուն:

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի՝ V դարում ծավալված աննախադեպ վերելքի մթնոլորտում ի հայտ եկավ նախընթաց հազարամյակի հերոսամարտերում ինքնահաստատված, սակայն արդեն վտանգված ժողովրդի գոյապահպանությունն ապահովող գաղափարախոսություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այն առաջնային դարձավ հայոց պետականության կորստի հետևանքով ստեղծված ծանր կացության պահանջով, ազգի վերնախավի՝ հայոց նախարարական ամենակենսունակ տների՝ Բագրատունիների և Մամիկոնյանների նախաձեռնությամբ և կյանքի կոչվեց Մեսրոպ Մաշտոցի ու նրա տաղանդավոր հետևորդների՝ Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու ջանքերով:

Հայտնի է, որ գաղափարախոսության սաղմերը հավատալիքի ու պաշտամունքի ձևով ծլարձակել էին դեռևս տոհմատիրական հասարակարգում: Իրական կյանքի բարդությունները նախնադարյան մարդու մտավոր անգործության պայմաններում առաջ էին բերել պարզունակ գաղափարներ, ըստ որոնց՝ տոհմը սերել է որևէ կենդանուց կամ բույսից, ո-

րոնք էլ դարձել են տվյալ տոհմի տոտեմները: Տոտեմական ծագում ունեցող կենդանական անձնանուններն ու տեղանունները, ինչպես նշում է Խ. Սամվելյանը, շատ է պահպանվել Հայաստանում: Դրանցից են Եզնիկ, Կորյուն, Վարազդատ անձնանունները, Ասլանյան, Արծրունի, Վարաժնունի տոհմանունները, Օձուն, Արջովիտ, Անգեղակոթ տեղանունները և այլն:

Տոտեմական ծագում ունեն նաև հայ նախարարական տների զինանշանները՝ կերտված բազեի, արծվի, խոյի, առյուծի պատկերներով: Գրեթե բոլոր հայաբնակ վայրերում կան սրբազան ծառեր՝ բարդի, սոսի, ընկուզենի և այլն¹:

Տոտեմիզմը՝ որպես նախնադարյան երևույթ, վերարտադրող տնտեսակարգում՝ ձևավորվող ցեղային հանրույթի միջավայրում, կորցնում է իր հասարակական ուժը: Երկրագործության ու անասնապահության զարգացմանը զուգընթաց՝ սկսվում են աշխարհընկալման նոր ըմբռումներ: Տարերքի ուժերի դեմ տագնապող մարդը անխուսափելի փորձանքները կանխելու համար բնությունը լցնում է սեփական երևակայությամբ ստեղծված գերբնական ոգիներով: Տոտեմական կենդանիներն ու բույսերն աստիճանաբար անձնավորվում են և դառնում նախնական համաստվածության բաղկացուցիչ մասը: Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում Հայաստանում ստեղծված ժայռապատկերներում մեծ թիվ են կազմում տիեզերական պատկերացումների հետ կապված երկգլխանի օձեր, վիշապներ: Աստղային երկնքի, արևի, լուսնի և այլ լուսատուներից բխող առասպելները դառնում են կազմավորված ցեղի ինքնության գաղափարակիրները: Դասակարգային հարաբերություններն ու ժողովրդի կազմավորումն ուղեկցվում են տոտեմական ու դիցաբանական մտածողությունից փիլիսոփայական ու կրոնական մտածողության անցումով: Մարդիկ գերբնական ուժերին ու աստվածներին սկսում են ծառայեցնել համաժողովրդական նպատակների իրականացման համար:

Եթե նախընթաց պատմաշրջանում մարդիկ իրենց փրկության հույսը որոնում էին տիեզերքում, ապա ըստ արդեն կազմավորված հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության՝ հայագիր գրականության ակունքներում ազգային գաղափարախոսություն ստեղծողները իրենց փրկությունը իրենց մեջ էին տեսնում: Վտանգված ժողովրդի գաղափարախոսության հիմքում դնում էին երեք համընդգրկուն գաղափար՝ ինքնություն, ինքնահամախմբում և ինքնազատագրում:

Ինքնությունն այն է, որի հիման վրա մարդկանց խումբը իրեն վկայակոչում է որպես ամբողջություն՝ «մենք»: Ազգային ինքնությունը ենթադրում է ինքնաճանաչում, որի բովանդակությունը ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային կերպարի ամբողջության ընկալումն է: Էթնիկական ինքնությունը պահպանել է ժողովրդի այնպիսի լավագույն բնութագծեր, ինչպիսիք են՝ ինքնագոհողությունը, կենսունակությունը, ազնվությունը, տեսակի պահպանության համար անհավասար կռիվ մղելու պատրաստակամությունը: Վտանգված այն ժողովուրդները, որոնք բնության շնորհած այս վեհ որակները չեն վերածում համակարգված գաղափարախոսության, կործանման են դատապարտված:

¹ Տե՛ս Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Եր., 1931, էջ 221:

Ազգային ինքնությունը տվյալ ժողովրդի՝ հազարամյակներով կուտակված ազգային ոգու ինքնագիտակցումն է: Ի՞նչ պետք է գիտակցեր հայ ժողովուրդը V դարում, ո՞րն էր նրա առաջ ծառայած առաջնահերթ խնդիրը՝ գոյապահպանության երաշխիքը: Իհարկե, ինքնահամախմբումն էր, ազգային միասնության ամրապնդումը: Ինքնահամախմբման բնատուր ընդունակությամբ են պայմանավորված յուրաքանչյուր ժողովրդի կենսունակությունն ու հարատևությունը: Ինքնահամախմբումն ու բարոյական ուժն են գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին ինքնագատազրման մեծ պայքարում: Իսկ ինքնագատազրումը ենթադրում է սեփական ուժերով պատմական հայրենիքի ազատագրում և պահպանում: Իրենից դուրս ինչ-որ այլ ուժերի ապավինող ժողովուրդը չի կարող ունենալ անկախ հայրենիք և ինքնիշխան պետություն:

Ինքնության, ազգային ինքնաճանաչման զգացումը կլանել էր V դարի ազգային-ազատագրական պայքարի ամենաերևելի գործիչներին՝ հատկապես Սահակ Բագրատունուն և Վահան Մամիկոնյանին:

Ամենևին էլ պատահական չէր, որ հենց նրանք հանձնարարեցին ժամանակի ամենաաչքի ընկնող մտավորականներին՝ Մովսես Խորենացուն ու Ղազար Փարպեցուն, պեղել-գտնել հայ ժողովրդի ծագման ակունքներն ու անցած հերոսական ճանապարհները, պարզել, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս, և որն է մեր լինելության ու փրկության երաշխիքը: Վահան Մամիկոնյանը ոչ միայն պատվիրել, այլև Ղազար Փարպեցուն տվել էր գրվելիք գրքի ծրագիրն ու ուղենշել հետապնդած նպատակը. Վահան Մամիկոնյանը, գրում է Ղ. Փարպեցին, «...Ինչպես որ Յայաստան աշխարհի հոգսն էր քաշում մյուս բոլոր արժանավոր գործողություններով, առավել ևս հարմար ու պատշաճ համարեց այս ... շարադրել..., Յայոց աշխարհում կատարվածը. մեծավ զգուշությամբ գրել ու մեկ առ մեկ դասավորել բոլոր հոգևորականների առաքինությունները և քաջ տղամարդկանց սխրանքները, որպեսզի ժողովրդական բազմությունները, հոգևորականների բարի վարքերը լսելով, ցանկանան նմանվող լինել նրանց ճգնություններին, և խիզախներն էլ, լսելով առաջներում գործված քաջությունների մասին, բազմապատկեն իրենց անձնական սխրանքները, իրենցից հետո թողնեն անվանի հիշատակ՝ իրենց անձերի ու ազգի համար, իսկ ծուլերն ու վախկոտները, անձամբ տեսնելով այս ամենը, և լսելով այլոց պարսավանքները, բարի նախանձից կրթվելով՝ ջանան լավանալ»²:

Ազգային ինքնության-ինքնաճանաչման ակունքների որոնումները Մովսես Խորենացուն հասցրել էին մարդկության առաջացման ակունքներին, համաշխարհային ջրհեղեղի ու Նոյ նահապետի ժամանակներին:

Համաշխարհային ջրհեղեղի մասին աստվածաշնչյան առասպելը Խորենացին ազգայնացրեց՝ առաջադրելով այն գաղափարը, որ Արարատ լեռան գագաթին պատսպարված Նոյը նախ հաստատվել է Յայաստանում:

Կազմավորված հայ ժողովրդի ձևավորվող ազգային գաղափարախոսության հիմքում Խորենացին դրել է մի այլ առասպել ևս՝ բաբելոնյան աշտարակաշինության և Հայկի ու Բելի կռվի պատմությունը, ըստ որի՝ հա-

² **Ղազար Փարպեցի**, Յայոց պատմություն և թուղթ Վահան Մամիկոնյանին, Եր., 1982, էջ 15:

մաշխարհային ջրհեղեղից հետո մարդիկ փորձել են կառուցել մի աշտարակ, որի բարձրությունը հասնելու էր երկինք: Ձայրանալով մարդկանց հանդգնության վրա՝ Աստված խառնում է լեզուները, մարդիկ դադարում են իրար հասկանալուց և ցրվում են աշխարհով մեկ: «Սրանցից մեկն էր և Հապտոսոթյան Հայկը, անվանի և քաջ նախարար...: Նա չվեց դեպի Արարդի երկիր..., իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, թվով մոտ երեք հարյուր հոգի»³: Այնուհետև Խորենացին պատմում է, թե ինչպես Հայկը սպանեց Բելին և ազատություն ու ինքնիշխանություն հաստատեց Հայոց աշխարհում: Այս տիեզերական առասպելը ևս Խորենացին դարձնում է ազգային ավանդավեպ, որի հիմքում դարձյալ դնում է հայ ժողովրդի՝ Արարչի կողմից ստեղծված լինելու գաղափարը: Փաստորեն, տոհմացեղային լեզուների տրոհման և ազգային լեզուների առաջացման պահից սկսած՝ ծագում է նաև հայոց լեզուն, իսկ նախնադարյան ցեղերի սովորական կայանատեղից Հայաստանը դառնում է կազմավորվող ժողովրդի հայրենիքը:

Խորենացու ջանքերով հայերենը V դարում արդեն գիտակցվում էր որպես Աստծո կանքով ստեղծված առաջին լեզուներից մեկը: Ուշագրավ է, որ Խորենացին հայոց լեզվի տարածման սահմաններով է որոշել նաև հայ ժողովրդի հայրենիքի սահմանները: «Իսկ արևելյան կողմից,- գրում է Խորենացին,- հայերեն խոսակցության վերջին սահմաններում (Վաղարշակը- Հ. Մ.) երկու կողմնակալ է նշանակում, մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից...»⁴, «...իսկ արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան (Բազարատին - Հ. Մ.) նշանակեց կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան»⁵:

Այսուհանդերձ, Խորենացին էական տարբերություն է դնում ազգի հայրենիքի ու պետության տարածքների եզրույթների միջև: Հայրենիքը ողջ ժողովրդին պատկանող բնատարածքն է՝ իր բնությամբ, բնակչությամբ, լեզվով, նվիրական ու սրբազան վայրերով: Իսկ պետության տարածքն այն է, ինչքան կարողանում են գրավել նրա զինվորները. «...Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կկտրե, այնքան կտիրե»⁶: Հայոց հայրենիքը Խորենացին ներկայացնում է իբրև մի ընտիր երկիր՝ իր Արարատով, Նախիջևանով, դրախտի չորս գետերով, որոնք վկայում են, որ Աստված առաջնություն է տվել այդ երկրին՝ դարձնելով նրան ետջրհեղեղյան մարդկության առաջին բնօրրան:

Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանը Խորենացին տեղադրում է Մարանդ գավառում, որը նշանակում է, թե «Մայր է անդ», այսինքն՝ հայոց ընդհանրական մայրը այնտեղ է թաղված: Այսպիսով՝ Խորենացու Հայոց պատմությունը դառնում է «...մի ծննդյան վկայական մեր ազգի համար,- գրում է Ս. Մալխասյանը - որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ով է ինքը և ինչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնավորությունը Ս. Գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում: Սերեցնելով հայերին աշտա-

³ **Սովետս Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 153:

⁵ Նույն տեղում, էջ 148:

⁶ Նույն տեղում, էջ 107:

րակաշինության ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկա աղեղ-նավորին՝ իբրև ազատության սիրահար և բռնակալ Բելին սպանող՝ նա փառավոր և սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը»⁷:

Մեծն Խորենացուն հավասարազոր պաթոսով էր Փավստոս Բուզանդը արդեն կերտել հայրենիքի, հայրենի հողի ու ջրի մոգական ուժի գաղափարը:

Գերի Արշակ թագավորի հավատարմությունը ստուգելու համար Շապուհը իր իմաստունների խորհրդով Հայաստանից բերել է տալիս հող ու ջուր և փռում իր պալատի մի մասում: «Այնուհետև Հայոց Արշակ թագավորին (Շապուհը) բերել տվեց իր առաջ, - գրում է Փավստոս Բուզանդը, - և նրա ձեռքից բռնած, ճեմելով շրջում էր: ...Եվ երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր հայոց, դու ինչու ինձ թշնամի եղար... և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցիր»: Արշակ թագավորն ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ: ...Եվ երդումս, որ քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց, ու ահա եկա քո առաջ, և ահա ես՝ քո ծառան, քո ձեռքում եմ. ինչպես ուզում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհի թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով. անմեղ ձևանալով նրան բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ «(Արշակը) այն տեղն էր հասնում, հայկական հողի վրա ոտք էր դնում, սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով խոսքը փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռու ինձանից չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը»⁸: Գերի Արշակ թագավորը անընկճելի է դառնում Պարսկաստանում հայկական հողի վրա, այնքան անընկճելի, որ արհամարհում է մահը: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Բուզանդը հայոց հողի կախարդական ուժի մասին գաղափարի հեղինակ է դարձնում օտարին՝ Շապուհի խորհրդականներին, այսինքն՝ բոլորն էլ գիտեն հայկական հողի մոգական հատկությունների մասին:

Այսպիսով, V դարի հայ մտածողների մեջ հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությունը իր բնույթով ներկայանում է որպես մեսիական, քանի որ առաջացնում է այնպիսի զգացում, որով հայ ժողովուրդը հավատում է իր արարչական ծագմանը:

Բայց ահա հայոց պետականության անկումից հետո ամեն ինչ փոխվում է: Անցյալի փառահեղությունների ավերակների վրա սփռվում է համազգային հուսալքությունը: Պետականագուրկ հայ ժողովուրդը կորցնում է իր ազգային արժեքները, ձեռք բերում թերարժեքության բարդույթ, որի դրսևորման նկատելի ձևերն են՝ ազգային բնավորության ավանդական ձևերի անհետացումը, զոհի բարդույթը, ազգային հպարտության կորուստը, անմիաբանությունը, պարտավորականությունը, ստրուկի հոգեբանությունը: Խորենացու «Հայոց պատմությունն» ավարտվում է հենց այսպիսի ողբալի իրավիճակի նկարագրությամբ. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև

⁷ Նույն տեղում, էջ 44:

⁸ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 215:

վերացան թագավորո՞ւ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ: ...Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը ... փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում»⁹:

Այնուհետև Խորենացին ցույց է տալիս այն համատարած անկումային տրամադրությունը, որ կլանել էր հայ հասարակության յուրաքանչյուր դասի ու զբաղմունքի մարդկանց. «Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած..., ոսկեսեր, նախանձոտ...:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամուլ, սնափառ:

Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկախոս, ծուլյ...:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծուլյ, սովորեցնելու մեջ փութաջան...:

Ժողովրդականները՝ անբարտավան, ստահակ...:

Ձինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծուլյ, ցանկասեր, թուլամորթ...:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից...:

Դատավորները տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր...:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած»¹⁰:

Այսքան արհավիրքների ենթարկված ժողովրդից բազմակի ջանքեր էին պահանջվելու՝ վերականգնելու հոգու կորուվը: Հայության գոյապահպանության հիմնախնդիրը այս իրավիճակում դառնում է տեսակի պահպանությունը: Ուժերի հարաբերակցության այս աննախադեպ անկման պահին փոխվում է հայ քաղաքական գործիչների գործելակերպը:

Եթե նախորդ դարաշրջանների հայ իշխաններին հայ մտավորականներն օժտում էին ասպետական վեհանձնությամբ ու գերբնական ուժով, ապա այժմ սեփական հնարավորություններով իրենց հայրենիքը փրկելու համար պետք է համախմբեին իրենց մարդկային ուժերը, ինքնահամախմբվեին, ապրեին ազգային միասնության գաղափարով: Բնական է, որ հայ ժողովուրդը թվապես, նյութապես չէր կարող զերազանցել իր հզոր հակառակորդներին: Այս իրավիճակում միայն ինքնահամախմբումն ու բարոյական ուժը կարող էին փոքր ժողովրդին գոտեպնդել ինքնազատագրման մեծ պայքարում:

Հայ ժողովրդի ներքին տրոհվածությունը առանձին սոցիալական խմբերի, նրանց բաժանված լինելը տարբեր պետությունների ու քաղաքակրթությունների միջև կրկնակի բարդ խնդիրների առաջ էին կանգնեցնում հայ հանրային միտքը կերտողներին: Արշակունյաց պետության անկումից հետո զոնե կիսանկախությունը վերականգնելու համար հայ նախարարները կյանքի և մահու պայքար էին մղում, իսկ հայ մտավորականները այդ պայքարի գաղափարաբանությունն էին մշակում: Առանց նպատակի չէին Խորենացին ու Փարպեցին մեծարում Մամիկոնյաններին ու Բագրատունիներին: Պատահական չէ, որ վերհիշելով հայ Արշակունիների պարթևական ծագումը՝ Մովսես Խորենացին վեր է հանում նաև հայ Բագրատունիների հրեական՝ բիբլիական ծագման վարկածը: Մարգպան Սահակ Բագրատունին այն անձն էր, որ Վահան Մամիկոնյանի ղեկավարու-

⁹ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 313:

¹⁰ Նույն տեղում, էջ 316:

թյանը Հայաստանում ծագած ապստամբության հաղթանակի շնորհիվ պետք է հաստատվեր հայոց թագավոր: Բագրատունիներին ծագեցնելով հրեա Շամբատի շառավիղներից՝ Խորենացու ստեղծած այս խորունկ գաղափարը հետագայում անընդհատ շոշափվել է, որին զուգահեռ՝ Բագրատունիները աստիճանաբար հզորացել են, մինչև որ թոթափելով արաբական լուծը՝ վերակերտել են մի նոր հայոց պետություն:

Մամիկոնյանների դյուցազնացումը Փավստոս Բուզանդի կողմից նույնպես աննպատակ չէր: Արշակունիների անկումից հետո անհրաժեշտ էր քաղաքական բոլոր ուժերը համախմբել նրանց շուրջ: Այդ նպատակով է, որ Ներսես Մեծի բերանով նա Մուշեղին ասում է. «Քո ձեռքով, քո տոհմի ձեռքով նա կփրկե հայոց աշխարհը մինչև հավիտյան»:

Հայ ժողովրդի ինքնության, ինքնահամախմբման ու ինքնազատագրման գործում շատ մեծ դեր են խաղացել նաև հայոց եկեղեցին ու քրիստոնեական գաղափարախոսությունը:

Ստեղծված ծանր վիճակում, երբ անհնար էր դարձել քաղաքական անկախության համար գերակշիռ ուժերի դեմ պայքարը շարունակել ռազմի դաշտում, հայ ժողովրդին մնացել էր մի ելք՝ ստեղծել նոր պայմաններին համապատասխան ազգապաշտպան հուսալի կառույցներ: Այդ նորը ազգի հոգևոր ներուժը համախմբելու և նրան գաղափարախոսական պայքարի դաշտ դուրս բերելու գործի կազմակերպումը եղավ: Ամենաարդյունավետ ձեռնարկումը հանդիսացավ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը: Սասանյանների կողմից պաշտվող զրադաշտականությունը քիչ էր տարբերվում հայկական հեթանոսական կրոնից, և հայոց ընտրանին՝ քաղաքական ու մտավոր վերնախավը, զգալով, որ հայոց հեթանոսական գաղափարախոսությունն անգոր է պատնեշ կանգնելու պարսկական ծուլողական մեքենայի դեմ, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն, որն էլ դարձավ ազգապահպան հզոր պատվար, և որի օգնությամբ հայ ժողովուրդը պահեց իր տեսակը նախ զրադաշտականության, ապա մահմեդականության դեմ դարավոր պայքարում:

Երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց նաև հունահռոմեական աշխարհում, և հիմա էլ սրանք էին Հայաստանում ծուլողական քաղաքականություն վարում, քրիստոնեությունը հայ ժողովրդի համար կորցնում է ազգապահպան ինստիտուտի այն գործառույթը, որը հաջողությամբ գործում էր պարսիկների դեմ: Այս նոր պայմաններում անհրաժեշտություն զգացվեց ստեղծել Արևմուտքի ոտնձգությունները կասեցնող կառույցներ, և հայ ժողովուրդը այդ բարդ խնդիրը ևս լուծեց հաջողությամբ: Լավագույն միջոցը 451 թվականին Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովի առաջադրած դոգմաների մերժումն էր: 506 թվականին Բաբկեն կաթողիկոսի գլխավորությամբ Դվինում կայացած ժողովը, գտնելով, որ Քրիստոսը ունի մեկ բնություն, մերժեց քաղկեդոնական երկաբնակությունը:

Դարագլուխ կազմող այս քայլով համաշխարհային քրիստոնեական վարդապետությունը ազգայնացվեց, որով վերականգնվեց հայոց եկեղեցու էթնոպաշտպան գործառույթը այժմ արդեն քրիստոնյա Արևմուտքի նկատմամբ: Սակայն երկաբնակության մերժումով հարցը չլուծվեց: Հայաստանը

բազմաթիվ օղակներով կապված էր կայսրությանը: Ազգային-ազատագրական քաղաքական պայքարին փոխարինում է գաղափարախոսական անզիջում պայքարը: Արշակունյաց պետության անկումից հետո հայությանը համախմբող ու գլխավորող հիմնական ուժը մնացել էր հայոց եկեղեցին:

Պարսկաստանի և Հռոմի առաջնահերթ նպատակն է դառնում այդ կազմակերպությունը ենթարկել իրենց կամ ոչնչացնել: Հայաստանում սկսվում է համառ, անզիջում ու տևական պայքար: Այս տեսական ու իմացական բարդ գիտելիքներ պահանջող պայքարին լծվում են հայ մշակույթի ազնվագույն ու ականավոր գործիչները և ստեղծում բանավիճային-գաղափարախոսական պայքարի հարուստ գրականություն:

Հայոց եկեղեցին, ծեսի ու հավատալիքի կրողը լինելուց բացի, դառնում է նաև համահայկական կենտրոնացված կազմակերպություն, որը մեծ դեր ուներ հայ ժողովրդին քաղաքական ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելու գործում: Եկեղեցական ժողովները իրենց նշանակությամբ համազգային միջոցառումներ էին, քանի որ բացի կրոնադավանաբանական հարցերից՝ ընդունում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին նաև աշխարհիկ հարաբերությունները:

ГЕНЗЕЛ МАНУЧАРЯН – *Возникновение национальной идеологии армянского народа.* – Идеи, предшествующие появлению армянской национальной идеологии, возникли в очень давние времена, приобретая новые качества на каждом этапе развития общества. основополагающие пункты национальной идеологии были систематизированы много позже формирования армянского народа в связи с созданием армянской письменности и литературы. Важнейшими среди них еще в V веке стали идеи национальной идентичности (самосознания), сплочённости и освобождения (национально-освободительной борьбы).

В системе национальной идеологии армянского народа особое место отведено Апостольской церкви, которая всей своей институциональной системой служила его самосохранению.

HENZEL MANUCHARYAN – *The Origins of National Ideology of the Armenian People.* – Ideas preceding the emergence of Armenian national ideology originated in very ancient times, gaining new qualities during each separate level of human development and maturing of the society. First much or less complete principles of national ideology were systematized many years after the formation of the Armenian nation, simultaneously with creation of Armenian written language and literature - the unprecedented flourishing of national self-consciousness. By dictates of the destiny of Armenian people the most important principles of Armenian national ideology became the ideas of national identity (self-consciousness), solidarity (national unity) and liberation (fight for national liberation) as far back as in V century.

In a difficult and contradictory centuries-old social life of Armenian people as well as in its system of national ideology there is a special place assigned for Armenian Apostolic Church, which, by all its ideological and institutional system, did its best for the self-preservation of the Armenian people.